ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

07 սեպտեմբեր 2011 թիվ 116
քաղաք Հրազդան

## ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի $46.^{2}$-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հրազդանի քաղաքային համայնքի ավագանին **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Թույլատրել մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված հետևյալ հողամասերը.

1. Կենտրոն թաղամաս Շատրվանային պուրակ "Բարության կենտրոն" Օգոստոսի 23 փողոց 27 հասցեում գտնվող՝ 1500.0քմ հողամաս՝ 45000 /քառասունհինգ հազար/ դրամ տարեկան վարձավճարով:
2. Կենտրոն թաղամաս Շատրվանային պուրակ "Բարության կենտրոն" Օգոստոսի 23 փողոց 29 հասցեում գտնվող՝ 1000.0քմ հողամաս՝ 50000 /հիսուն հազար/ դրամ տարեկան վարձավճարով:
3. Կենտրոն թաղամաս Շատրվանային պուրակ "Բարության կենտրոն" Օգոստոսի 23 փողոց 31 հասցեում գտնվող՝ 240.0քմ հողամաս՝ 36000 /երեսունվեց հազար/ դրամ տարեկան վարձավճարով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
2. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ԿԱՄՈ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ
5. ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ